Մ.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ, Շ., «Կաճառ» գիտական կենտրոն, 2015, 96 էջ:



Հայերի ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում բազմաթիվ հրատարակություններ ու շնորհանդեսներ եղան, որոնք կոչված էին վերահիմաստավորելու անցյալը և նոր փաստարկներով հիմնավորելու հայոց պահանջատիրությունը: «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով համահայկական ձեռնարկումներից, բնականաբար, անմասն չմնաց նաև Արցախը, որտեղ պետական ու հասարակական հիմունքներով կազմակերպված միջոցառումները լայնորեն լուսաբանվել են ԶԼՄ-ների կողմից: Այդ շարքում կարելի է դիտարկել նաև «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի պատմության ամբիոնի դոցենտ, «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանի «Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ» գրքույկի հրատարակումը: Այդ աշխատանքի լեյտմոտիվն այն է, որ Արցախում լավ են հիշում ցեղասպանության քաղաքականության դրսևորումները 20-րդ դարի առաջին քառորդին և 80-90-ական թվականներին նախկին Ելիզավետպոլի նահանգի հայաբնակ վայրերում, հատկապես՝ Բաքվում, Շուշիում, Սումգայիթում, Մարաղայում և այլուր: Ակնհայտորեն, այդ ողբերգական դեպքերի վերահիմաստավորման ու ցեղասպանության քաղաքականության պատմագիտական քննության անհրաժեշտությունը կար, հետևաբար հիշյալ գրքույկի երևան գալը ճիշտ ժամանակին էր: «Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ» գրքույկը հրատարակության է երաշխավորել «Կաճառ» գիտական կենտրոնի գիտխորհուրդը և տպագրվել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսական միջոցներով:

Ուշագրավ է տարբեր ժամանակամիջոցներում տեղի ունեցած ողբերգական դեպքերը արմենոցիդի քաղաքականության համապատկերում դիտարկելու հեղինակի մտահղացումը, որի իրականացման մասին են վկայում ոչ միայն այն փաստը, որ գրքույկը նվիրված է Ցեղասպանության 100-րդ, թուրք-թաթարական ընդհարումների 110-րդ և Շուշի քաղաքի հայ բնակչության ջարդերի 95-րդ տարելիցներին, այլ նաև գրքույկի կառուցվածքն ու բովանդակությունը: «Առաջաբանի փոխարեն» ներածական խոսքում հեղինակը մեղադրանք է առաջադրել Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը Արևելյան Անդրկովկասում շարունակող Ադրբեջանին և այն միտքն է զարգացրել, որ Թուրքիայի իսկ կողմից ստեղծված այդ արհեստական միավորի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականությունը վաղ թե ուշ ենթակա է դատապարտման:

Այնուհետև, վերհանվել են Անդրկովկասում 1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. օգոստոս տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումների պատճառները՝ հատկանշե-

լով, որ դրանք հետևանք էին պատմաքաղաքական, ազգային-էթնիկական, սոցիալ-տնտեսական, կրոնամշակութային և այլ հանգամանքների:

Հայոց մեծ եղեռնի քաղաքական ու պատմական դասերի վերլուծությունը երիցս պահանջված է այդ ողբերգական դեպքերի 100-րդ տարելիցին, ինչին էլ ձեռնամուխ է եղել մերօյա պատմաբանը՝ անցյալը քննության առնելով ներկա իրողությունների լույսի ներքո:

«Անցյալը մեզ հետ է. վերագնահատումներ, խորհրդածություններ» գրքույկի առանցքում Շուշի քաղաքի 1920 թ.մարտյան ողբերգության թեման է: Հեղինակը զարգացրել է այն միտքը, որ այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության զինված ուժերի և թուրքական սպաների անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ Շուշի քաղաքում իրականացված ոճրագործությունները շարունակությունն էին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում հայ ազգաբնակչության ցեղասպանության: Շուրջ երկու և կես տասնամյակ ուսումնասիրելով թեման՝ հեղինակը հանգել է մի շարք կարևոր եզրակացությունների Շուշիի աղետի պատճառների, զինված ինքնապաշտպանության կազմակերպման ու մարտավարության ընտրության, ռազմական գործողությունների վարման, պատմագրության հիմնահարցերի մասին և կատարել մի շարք ճշգրտումներ: Մասնավորապես, ցույց է տրվել, որ թուրք-ադրբեջանցիներից ու քրդերից կազմված կանոնավոր զորքերի, նրանց կցագրված ավազակախմբերի նախահարձակմանը հայերը պատասխանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Ադրբեջանի քարոզչությունը ներկայացրել է որպես ապստամբություն, հետևանքը պատճառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության կոտորածն արդարացնելու նպատակով: Այս դրույթի գիտական շրջանառության մեջ դնելը պահանջված է հատկապես Հայոց մեծ եղեռնի 100-րդ և Շուշիի աղետի 95-րդ տարելիցներին, որովհետև դեռ հանիրավի ու ակամա շրջանառվում են ադրբեջանաթուրքական քարոզչության ու պատմության նենգափոխման արդյունքում ի հայտ եկած կեղծիքները: Գրքույկը հիմնավոր փաստերով մերկացնում է պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունն ու նենգափոխումները և կոչված է նպաստելու տեղեկատվական պատերազմում մեր դիրքերի հետագա ամրապնդմանը:

Հավելվածում տեղ են գտել Շուշիի մարտյան ողբերգության 90-րդ տարելիցի առթիվ հեղինակի «Պետականորեն կազմակերպված ահաբեկչության հերթական զոհը» ավելի վաղ գրված հոդվածը, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ» թեմայով Ստեփանակերտում և Շուշիում 2010 թ. մարտի 21-24-ը տեղի ունեցած միջազգային գիտաժողովի մասին տեղեկատվությունը, Շուշիի հայ բնակչության ջարդերի 91-րդ տարելիցի առթիվ «Կաճառ» գիտական կենտրոնում կազմակերպված «Կլոր սեղանի» մասնակիցների հայտարարության տեքստը, որոնք նոր մանրամասնություններով են լրացնում մատուցվող նյութը և կոչված են ամբողջացնելու մեր պատկերացումը խնդրո առարկա թեմայի վերաբերյալ:

Գրույքկը եզրափակվում է արխիվային նյութերի ու տպագիր սկզբնաղբյուրների, աշխատությունների, պարբերական մամուլի շուրջ երկու հարյուր միավորի հասնող օգտագործված գրականության ցանկով, պատմավավերագրական քսանհինգ լուսանկարներով: Աշխատանքը զերծ չէ նաև որոշակի, հատկապես՝ տեխնիկական թերություններից, որոնք,սակայն, չեն նսեմացնում դրա գիտական արժեքը և ներդրումը պատմագրության մեջ:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Գրքույկը կարող է մեթոդապես օգտակար լինել ուսուցիչներին, պիտանի լինել ինչպես Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված համապատասխան միջոցառումներում, այնպես էլ հանրակրթական դպրոցներում, բուհերում վերոհիշյալ թեմաների ուսուցման գործընթացում օգտագործելու համար: Հատկանշելի է, որ նորովի ներկայացված են Հայոց ցեղասպանության, թուրք-հայկական ընդհարումների, Շուշի քաղաքի մարտյան ողբերգության պատճառներն ու հետևանքները, պատմական դասերն ու հետևությունները, որոնք պահանջված են այսօրվա ու գալիք սերունդների համար:

Արարատ Վարդանյան
պ.գ.թ., դոցենտ